# ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

**Արարատի մարզի Փոքր Վեդու Մ. Հովհաննիսյանի անվան միջն. դպրոց**

- Դասարան՝ **7-րդ**
- Առարկա՝ **Հայոց լեզու**
- Դասագիրք՝ **«Հայոց լեզու 7», Ф. Մեյթիխանյան, «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, 2023 թ.**
- **Ուսուցիչ՝ Անուշ Հովսեփյան**

**2023-2024 ՈՒՍՏԱՐԻ**

(ՏԱՐԵԿԱՆ 103 ԺԱՄ, ՇԱԲԱԹԱԿԱՆ՝ 3 ԴԱՍԱԺԱՄ)

2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ (ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ 57 ԺԱՄ)

| Հ.Ժ. | Թեմայի բովանդակությունը | Ժամա-քանակ | Դասագրքի թեմայի էջերը | Վերջնադյունքներ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Նպատակ | Վերջնարդյունքներ |
| | **Դերանուն** | | | . Ճանաչել տալ դերանուններն իրենց տեսակներով:<br>. Հասնել դերանունների տարբերակման ճիշտ կիրառմանը: | . Ճանաչի և դուրս գրի դերանունները:<br>.Զևափոխի և կիրառի դերանվան տարբեր տեսակներն ըստ անհրաժեշտության:<br>. Տրված դերանուններով կազմի բանավոր ու գրավոր խոսք: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | . Սովորեցնել դերանունների հոլովման առանձնահատկությունները:<br>. Ճանաչել տալ հոդերի ուղղագրությունը և ուղղախոսությունը:<br>.Հասնել հոդերի և նրանց ձևերիր ճիշտ կիրառմանը:<br>.Սովորեցնել հոդերի տեսակները: | . Դերանունների հոմանիշ և հականիշ զույգերը ճիշտ կիրառի գրավոր և բանավոր խոսքում:<br>. Տրված տեքստից դուրս գրի հոդերը և նշի դրանց տեսակները:<br>. Կազմի նախադասություններ ստացական, դիմորոշ և ցուցական հոդերի կիրառմամբ:<br>. Կողմնորոշվի, թե տրված դերանունների փոխարեն որ հոդերը կարելի է գործածել: |
| 1 | **Դերանունը որպես խոսքի մաս** | 1 | 85-86 | .Ճանաչի դերանունը:<br>.Ընկալի դերանունների ընդհանուր իմաստը՝ առարկա, առարկայի և գործողության հատկանիշ:<br>.Իմանա, որ դերանունը չթեքվող խոսքի մաս է:<br>. Թվարկի դերանվան տեսակները:<br>.Որոշի նախադասության մեջ դերանվան շարահյուսական պաշտոնը / ենթակա, ստորոգյ<br>կազմող բառ, գոյականական և բայական անդամի լրացում/:<br>. Ճիշտ կիրառի տրված դերանունները խոսքում: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | **Անձնական դերանուններ։ Անձնական դերանունների հոլովումը։** | 1 | 86- 89 | .Իմանա անձնական դերանունները։<br>.Դասակարգի  անձնական դերանուններն ըստ դեմքի ը թվի։<br>.Հոլովի  անձնական դերանունները։<br>.Բացատրի հոլովման առանձնահատկությունը։<br>.Ձևափոխի և կիրառի  անձնական դերանունները գրավոր և բանավոր խոսքում։ |
| 3 | **Ցուցական   դերանուններ** | 1 | 89- 92 | . Ճանաչի և սահմանի ցուցական դերանունները։<br>. Իմանա հոլովման առանձնահատկությունը և հոլովի ցուցական դերանուններ։<br>. Տարբերի հոլովվող և չհոլովվող ցուցական դերանունները։<br>. Տեքստից դուրս գրի գոյականաբար գործածված ցուցական դերանունները։<br>. Դասակարգի պարզ և բարդ ցուցական ցերանունները։<br>. Ձևափոխի և կիրառի  ցուցական դերանունները գրավոր և բանավոր խոսքում։ |
| 4 | **Փոխադարձ  դերանուններ** | 1 | 92-93 | . Ճանաչի և սահմանի փոխադարձ դերանունները։<br>. Հոլովի փոխադարձ դերանունները։<br>. Իմանա, որ փոխադարձ դերանունները չունեն եզակի թիվ,  ուղղական և ներգոյական հոլովաձև։<br>. Տեքստից դուրս գրի փոխադարձ դերանունները, որոշի հոլովը։<br>. Ճիշտ կիրառի փոխադարձ դերանունները գրավոր և բանավոր խոսքում։ |
| 5 | **Հարցական դերանուններ** | 1 | 93-95 | . Ճանաչի և սահմանի հարցական դերանունները։<br>. Հոլովի հարցական դերանունները։<br>. Ճիշտ կետադրի հարցական դերանունները։<br>. Տեքստից դուրս գրի հարցական դերանունները, որոշի հոլովը և հոլովումը։<br>. Թվարկի չհոլովվող հարցական դերանունները։<br>. Ճիշտ կիրառի հարցական դերանունները գրավոր և բանավոր խոսքում։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 6 | Հարաբերական դերանուններ | 1 | 95-97 | . Ճանաչի և սահմանի հարաբերական դերանունները:<br>. Հասկանա, որ հարաբերական դերանունները նույն հարցական դերանուններն են, բայց ունեն տարբեր կիրառություն:<br>. Տեքստից դուրս գրի և դասակարգի հարցական և հարաբերական դերանունները:<br>. Ճիշտ կիրառի հարաբերական դերանունները գրավոր և բանավոր խոսքում:<br>. Դասակարգի հարցական-հարաբերական դերանուններն ըստ հարաբերակից խոսքի մասերի / գոյականական, ածականական, թվականական, մակբայական/: |
| 7 | Որոշյալ դերանուններ | 1 | 97-98 | . Ճանաչի և սահմանի որոշյալ դերանունները:<br>. Իմանա, որ որոշյալ դերանունները գոյականաբար գործածվում և հոլովվում են:<br>. Իմանա հարադրական կազմություն ունեցող որոշյալ դերանունների ուղղագրությունը:<br>. Տեքստից դուրս գրի որոշյալ դերանունները, որոշի հոլովը և հոլովումը:<br>. Ճիշտ կիրառի որոշյալ դերանունները գրավոր և բանավոր խոսքում: |
| 8 | Անորոշ դերանուններ | 1 | 98-100 | . Ճանաչի և սահմանի անորոշ դերանունները:<br>. Իմանա, որ անորոշ դերանունները գոյականաբար գործածվում և հոլովվում են:<br>.Դասակարգի պարզ և բարդ անորոշ դերանունները:<br>. Իմանա բարդ դերանունների ուղղագրությունը:<br>. Տեքստից դուրս գրի անորոշ դերանունները, որոշի հոլովը և հոլովումը:<br>. Ճիշտ կիրառի անորոշ դերանունները գրավոր և բանավոր խոսքում: |
| 9 | Ժխտական դերանուններ | 1 | 100-101 | . Ճանաչի և սահմանի ժխտական դերանունները: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | . Դասակարգի հոլովվող և չհոլովվող դերանունները:<br>. Իմանա, որ ժխտական դերանունները կազմությամբ բարդ են:<br>. Իմանա ուղղագրությունը:<br>. Տեքստից դուրս գրի ժխտական դերանունները, որոշի հոլովը և հոլովումը:<br>. Ձևափոխի և կիրառի ժխտական դերանունները խոսքում: | |
| 10 | **Հոդեր** | 1 | 102-103 | .Ճանաչի և սահմանի դերանվանական հոդերը:<br>. Իմանա և սահմանի հոդերի տեսակները՝ :<br>. Տեքստում գտնի հոդերը, որոշի տեսակը:<br>.Հոդերը փոխարինի դերանուններով և հակառակը:<br>. Ճիշտ կիրառի դերանվանական հոդերը գրավոր և բանավոր խոսքում: | |
| 11 | **Անցած թեմաների կրկնություն, ամրապնդում** | 1 | 104-108 | . Կկատարի տարաբնույթ գործնական աշխատանքներ՝ գրավոր և բանավոր, կամրապնդի ստացած գիտելիքները, կհմտանա դրանց կիրառման մեջ: | |
| 12 | **Թեմատիկ գրավոր աշխատանք** | 1 | | | |
| | **Բայ** | | 109 | **Նպատակ**<br>**.**Զնավորել տարբեր բնույթի նախադասություններում բայաձևերը ճիշտ կիրառելու, բայն իր բոլոր ձևերով խոսքի մեջ կիրառելու հմտություններ, ժամանակը ճիշտ պատկերացնելու և համապատասխան բայաձևերով արտահայտելու հմտություններ:<br>. Զարգացնել հաղորդակցական հմտություններ:<br>. Ներկայացնել բայի ձևաբանական առանձնահատկությունները, դրսևորման ձևերը, բայի կազմությունը ( պարզ, ածանցավոր): | **Վերջնարդյունքներ**<br>.Տարբեր խոսքի մասերից կազմի բայեր:<br>. Տեքստից դուրս գրի բայի դիմավոր և անդեմ ձևերը:<br>. Տրված տեքստում ընդգծի բայերը և որոշի դրանց կազմությունը:<br>Տարբերակի բայածանցները:<br>.Տարբերի ներգործական, կրավորական և չեզոք սեռի բայերը:<br>.Կողմնորոշվի, թե տեքստում ընդգծված բայերը որ սեռին են պատկանում:<br>.Տարբերակի բայի անդեմ ձևերը դիմավոր ձևերից, որոշի լծորդությունը:<br>. Տեքստից դուրս գրի բայի անդեմ ձևերը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | . Ճանաչել տալ բայի դիմավոր և անդեմ ձևերի հատկանիշները:<br>.Սովորեցնել տարբերակել դիմավոր ձևերը անդեմներից:<br>. Հասնել ներգործական, կրավորական և չեզոք բայերի ճիշտ կիրառմանը:<br>. Սովորեցնել բայի անդեմ ձևերի ճիշտ կիրառությունը, հասնել դիմավոր ձևերի՝ դեմքի, թվի, ժամանակի կարգի իմացության ամրապնդմանը: | և դրանք գործածի նախադասություններ<br>.Խոնարհի բայերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը և կիրառի խոսքում:<br>. Անկանոն և պակասավոր բայերը ճիշտ կիրառի խոսքում: |
| 13 | **Բայը որպես խոսքի մաս** | 1 | 109-112 | .Իմանա, որ՝<br>▪ բայը ցույց է տալիս գործողություն և եղելություն.<br>▪ թեքվող խոսքի մաս է.<br>▪ լինում է դիմավոր և անդեմ.<br>▪ նախադասության մեջ դառնում է ստորոգյալ, բայական և գոյականական անդամի լրացում:<br>. Տեքստից դուրս գրի բայերը:<br>. Կազմի բայեր տարբեր խոսքի մասերից, կիրառի նախադասության մեջ: | |
| 14 | **Բայի կազմությունը** | 1 | 112-114 | .Պատկերացնի բայի խոսքիմասային ձևը:<br>.Իմանա անորոշ դերբայի վերջավորությունները:<br>.Բացատրի լծորդությունը:<br>.Տարբերակի պարզ և ածանցավոր բայերը:<br>.Իմանա ածանցավոր բայերի տեսակները, ճանաչի բայածանցները, Ճիշտ կազմի ածանցավոր բայեր, կիրառի նախադասության մեջ:<br>.Տարբերակի հարադիր և զուգադիր բայերը:<br>.Տեքստից դուրս գրի պարզ, ածանցավոր, հարադիր և զուգադիր բայեր, բացատրի կազմությունը:<br>.Կազմի պատճառական բայեր տալ բայի հարադրությամբ, կիրառի նախադասության մեջ<br>.Կազմի բազմապատկական բայեր արմատի կրկնությամբ, կիրառի նախադասության մեջ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15 | **Բայի անդեմ և դիմավոր ձևերը** | 1 | 114 | .Տարբերակի անդեմ և դիմավոր բայերը, ճիշտ կիրառի խոսքում:<br>.Իմանա, որ՝<br>▪ անդեմ ձևերը կոչվում են դերբայներ, դիմավոր ձևերը՝ եղանակային ձևեր:<br>▪ դիմավոր ձևերը ստորոգյալներ են և ունեն դեմքի, թվի, ժամանակի, եղանակի հատկանիշներ:<br>▪ և՛ անդեմ, և՛ դիմավոր ձևերն ունեն սեռի հատկանիշ:<br>. Տարբեր ոճի տեքստերում գտնի անդեմ և դիմավոր բայերը:<br>. Անդեմ բայերից կազմի դիմավոր ձևեր, գործածի նախադասության մեջ: |
| 16 | **Բայի սեռը: Ներգործական սեռ** | 1 | 115-116 | . Իմանա, որ բայն ունի երեք սեռ:<br>. Սահմանի ներգործական սեռը:<br>. Իմանա, որ՝<br>▪ ներգործական սեռի բայերը պահանջում են հայցական հոլովով լրացում.<br>▪ ներգործական սեռի բայերից կազմվում են կրավորական բայեր.<br>▪ բոլոր պատճառական բայերը ներգործական սեռի են:<br>. Նախադասության մեջ գտնի ներգործական սեռի բայը, դուրս գրի իր լրացման հետ միաս<br>. Ներգործական սեռի բայերը կիրառի նախադասության մ եջ՝ ցույց տալով լրացումը: |
| 17 | **Բայի սեռը: Կրավորական սեռ** | 1 | 116 | . Սահմանի կրավորական սեռը:<br>. Իմանա, որ՝<br>▪ կրավորական սեռի բայերը պահանջում են բացառական հոլովով լրացում.<br>▪ կրավորական սեռի բայերը կազմվում են ներգործական բայերից վ ածանցով.<br>▪ վ ածանցով ոչ բոլոր բայերն են կրավորական սեռի.<br>▪ կրավորական սեռի բայով կազմված նախադասությունը կարելի է շրջել ներգործակ սեռի բայով կազմված նախադասության և հակառակը:<br>. Նախադասության մեջ գտնի կրավորական սեռի բայը, դուրս գրի իր լրացման հետ միասին:<br>. Կրավորական  սեռի բայերը կիրառի նախադասության մ եջ՝ ցույց տալով լրացումը:<br>. Կրավորական կառուցվածքի նախադասությունը դարձնի ներգործական և հակառակը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 18 | **Բայի սեռը: Չեզոք սեռ** | 1 | 117 | .Սահմանի չեզոք սեռը:<br>.Իմանա, որ չեզոք սեռի բայերը կարող են ձևով նման լինել ներգործական և կրավորական բայերին: Տարբերակի չեզոք սեռի բայերը մյուսներից՝ կիրառելով ներգործական և կրավորական բայերի մասին գիտելիքները:<br>.Տեքստում գտնի չեզոք սեռի բայերը:<br>.Կիրառի չեզոք սեռի բայեր գրավոր և բանավոր խոսքում: |
| 19 | **Բայի անդեմ ձևեր՝ դերբայներ** | 1 | 119 | . Սահմանի բայի անդեմ ձևերը:<br>.Իմանա, որ՝<br>▪ բայի անդեմ ձևերը կոչվում են դերբայներ.<br>▪ հայերենն ունի ութ դերբայ, որոնցից չորսը անկախ դերբայներ են, չորսը՝ ձևաբայեր<br>▪ անկախ դերբայները կարող են ինքնուրույն հանդես գալ նախադասության մեջ և դառնալ ենթակա, ստորոգյալի մաս և լրացում, իսկ ձևաբայերը հանդես են գալիս միայն օժանդակ բայի հետ, կազմում դիմավոր ձև և դառնում ստորոգյալ:<br>.Տեքստում գտնի բայի անդեմ ձևերը:<br>.Գործածի անդեմ ձևերը նախադասության մեջ: |
| 20 | **Անկախ դերբայներ: Անորոշ դերբայ** | 1 | 120-121 | .Սահմանի և ճանաչի անորոշ դերբայը:<br>.Հոլովի անորոշ դերբայը, կազմի նախադասություն՝ կիրառելով տարբեր հոլովաձևեր:<br>. Տարբեր խոսքի մասերից կազմի անորոշ դերբայներ, որոշի լծորդությունը, կիրառի խոսքու<br>ուղիղ և փոխաբերական իմաստով:<br>. Տարբեր ոճի տեքստերում գտնի անորոշ դերբայը, վերլուծի ձևաբանորեն: |
| 21 | **Անկախ դերբայներ: Ենթակայական դերբայ** | 1 | 122-123 | .Սահմանի և ճանաչի ենթակայական դերբայը:<br>.Իմանա, որ ենթակայական դերբայը կարող է կիրառվել գոյականաբար և հոլովվել:<br>.Կազմի ենթակայական դերբայներ, կիրառի խոսքում ուղիղ և փոխաբերական իմաստով:<br>.Կիրառի ենթակայական դերբայը գոյականաբար:<br>. Տարբեր ոճի տեքստերում գտնի ենթակայական դերբայը, վերլուծի ձևաբանորեն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 22 | Անկախ դերբայներ:<br>Հարակատար դերբայ | 1 | 123-124 | .Սահմանի և ճանաչի հարակատար դերբայը:<br>.Իմանա, որ հարակատար դերբայը կարող է կիրառվել գոյականաբար և հոլովվել:<br>.Կազմի հարակատար դերբայներ, կիրառի խոսքում ուղիղ և փոխաբերական իմաստով:<br>.Կիրառի հարակատար դերբայը գոյականաբար:<br>. Տարբեր ոճի տեքստերում գտնի հարակատար դերբայը, վերլուծի ձևաբանորեն: |
| 23 | Անկախ դերբայներ:<br>Համակատար դերբայ | 1 | 124-125 | .Սահմանի և ճանաչի համակատար դերբայը:<br>.Իմանա, որ համակատար դերբայը չի կիրառվում գոյականաբար և չի հոլովվում:<br>.Կազմի համակատար դերբայներ, կիրառի խոսքում ուղիղ և փոխաբերական իմաստով: :<br>. Տարբեր ոճի տեքստերում գտնի համակատար դերբայը, վերլուծի ձևաբանորեն: |
| 24 | Կախյալ դերբայներ /ձևաբայեր/:<br>Անկատար ձևաբայ | 1 | 125 | . Սահմանի և ճանաչի անկատար ձևաբայը:<br>.Կազմի անկատար ձևաբայեր, կիրառի նախադասության մեջ:<br>. Իմանա, որ անկատար ձևաբայը օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձև և դառնում ստորոգյալ:<br>.Անկատար ձևաբայով կազմած դիմավոր ձևերը կիրառի խոսքում:<br>. Տարբեր ոճի տեքստերում գտնի անկատար ձևաբայերը, դուրս գրի օժանդակ բայի հետ միասին: |
| 25 | Վաղակատար ձևաբայ | 1 | 126-127 | .Սահմանի և ճանաչի վաղակատար ձևաբայը:<br>.Կազմի վաղակատար ձևաբայեր, կիրառի նախադասության մեջ:<br>. Իմանա, որ վաղակատար ձևաբայը օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձև և դառնում ստորոգյալ:<br>.Վաղակատար ձևաբայով կազմած դիմավոր ձևերը կիրառի խոսքում:<br>. Տարբեր ոճի տեքստերում գտնի վաղակատար ձևաբայերը, դուրս գրի օժանդակ բայի հետ միասին: |
| 26 | Ապակատար ձևաբայ | 1 | 127 | .Սահմանի և ճանաչի ապաակատար ձևաբայը:<br>.Կազմի ապաակատար ձևաբայեր, կիրառի նախադասության մեջ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 27 | | | | . Իմանա, որ ապակատար ձևաբայը օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձև և դառնում ստորոգյալ:<br>.Ապակատար ձևաբայով կազմած դիմավոր ձևերը կիրառի խոսքում:<br>. Տարբեր ոճի տեքստերում գտնի ապակատար ձևաբայերը, դուրս գրի օժանդակ բայի հետ միասին: |
| 27 | **Ժխտական ձևաբայ** | 1 | 127-128 | .Սահմանի և ճանաչի ժխտական ձևաբայը:<br>.Կազմի ժխտական ձևաբայեր, կիրառի նախադասության մեջ:<br>. Իմանա, որ ժխտական ձևաբայը դիմավոր ձև կազմում է օժանդակ բայի միայն ժխտական ձևերի հետ և դառնում ստորոգյալ:<br>. Ժխտական ձևաբայով կազմած դիմավոր ձևերը կիրառի խոսքում:<br>. Տարբեր ոճի տեքստերում գտնի ժխտական ձևաբայերը, դուրս գրի օժանդակ բայի հետ միասին: |
| 28 | **Անցած նյութի կրկնություն: Ամրապնդող վարժություններ** | 1 | 129-130 | . Կկատարի տարաբնույթ գործնական աշխատանքներ՝ գրավոր և բանավոր, կամրապնդի ստացած գիտելիքները, կիմտանա դրանց կիրառման մեջ: |
| **29** | **Թեմատիկ գրավոր աշխատանք** | 1 | | |
| 30 | **Բայի դիմավոր ձևեր: Դեմք, թիվ, ժամանակ** | 1 | 131-134 | .Սահմանի և տարբերակի բայի դիմավոր ձևերը:<br>. Տարբեր խոսքի մասերից կազմի դիմավոր ձևեր, կիրառի ուղիղ և փոխաբերական իմաստներով:<br>. Տեքստում գտնի դիմավոր բայերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը: |
| 31 | **Բայի եղանակը** | 1 | 134-135 | . Սահմանի և տարբերակի բայի եղանակները:<br>. Տեքստում գտնի տարբեր եղանակաձևերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը, ճիշտ կիրառի խոսքում:<br>. Խմբավորի բայերն ըստ եղանակի, կիրառի նախադասության մեջ:<br>. Համեմատի տարբեր եղանակաձևերը, գտնի տարբերություններն ու ընդհանրությունները |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 32 | **Բայի խոնարհումը** | 1 | 135-136 | .Սահմանի՝ ինչ է բայի խոնարհումը:<br>. Տարբերակի պարզ և բաղադրյալ դիմավոր ձևերը:<br>. Տեքստում գտնի խոնարհված բայերը, որոշի խոնարհումը և կազմությունը / պարզ, բաղադրյալ/:<br>.Խոնարհի բայեր, որոշի դեմքը, թիվը, ժամանակը, եղանակը, ճիշտ կիրառի խոսքում: |
| 33 | **Օժանդակ բայի խոնարհումը և ուղղագրությունը: Դրական և ժխտական խոնարհում** | 1 | 136-138 | . Խոնարհի օժանդակ բայը ներկա և անցյալ ժամանակով, բացատրի ուղղագրությունը:<br>. Տեքստից դուրս գրի օժանդակ բայերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը:<br>. Ճիշտ կիրառի օժանդակ բայերը գրավոր և բանավոր խոսքում, բացատրի շարադասությո<br><br>. Հասկանա և սահմանի դրական և ժխտական խոնարհումը:<br>.Դրական խոնարհման բայերը դարձնի ժխտական, բացատրի կազմությունը և ուղղագրությունը:<br>. Տեքստից դուրս գրի դրական և ժխտական խոնարհման բայերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը, եղանակը, ճիշտ կիրառի խոսքում: |
| 34 | **Սահմանական եղանակ** | 1 | 138 | . Սահմանի և տարբերակի սահմանական եղանակը:<br>. Տեքստում գտնի սահմանական եղանակի բայաձևերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը, կազմությունը:<br>. Կազմի սահմանական եղանակի բայաձևեր, ճիշտ կիրառի խոսքում: |
| 35 | **Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը: Անկատար ներկա: Անկատար անցյալ: Կազմությունը, խոնարհումը** | 1 | 139-141 | . Սահմանի և տարբերակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը:<br>. Բացատրի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերի կազմությունը:<br>. Անկատար ներկա ժամանակաձևերը վերածի անկատար անցյալի և հակառակը:<br>. Խոնարհի բայերը անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերով, դրական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | և ժխտական խոնարհմամբ:<br>. Տեքստում գտնի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը, որոշի դեմքը թիվը, ժամանակը, խոնարհումը:<br>. Ժամանակաձևերը ճիշտ կիրառի խոսքում: |
| 36 | **Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը:Վաղակատար ներկա: Վաղակատար անցյալ: Կազմությունը, խոնարհումը** | 1 | 142-144 | . Սահմանի և տարբերակի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերը:<br>. Բացատրի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերի կազմությունը:<br>. Վաղակատար ներկա ժամանակաձևերը վերածի վաղակատար անցյալի և հակառակը:<br>. Խոնարհի բայերը վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերով, դրական և ժխտական խոնարհմամբ:<br>. Տեքստում գտնի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը, խոնարհումը:<br>. Ժամանակաձևերը ճիշտ կիրառի խոսքում: |
| 37 | **Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը: Անցյալ ապակատար: Կազմությունը, խոնարհումը** | 1 | 144-145 | .Սահմանի և տարբերակի ապակատար անցյալ ժամանակաձևը:<br>. Բացատրի ապակատար անցյալ ժամանակաձևի կազմությունը:<br>. Խոնարհի բայերը ապակատար անցյալ ժամանակաձևով, դրական և ժխտական խոնարհմամբ:<br>. Տեքստում գտնի ապակատար անցյալ ժամանակաձևով դրված բայերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը, խոնարհումը:<br>. Ժամանակաձևը ճիշտ կիրառի խոսքում: |
| 38 | **Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը: Անցյալ կատարյալ: Կազմությունը, խոնարհումը** | 1 | 145-146 | .Սահմանի և տարբերակի անցյալ կատարյալ ժամանակաձևը:<br>. Բացատրի անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմությունը, սոսկածանցավոր բայերի անցյալ կատարյալի կազմության առանձնահատկությունը:<br>. Խոնարհի բայերը անցյալ կատարյալ ժամանակաձևով, դրական և ժխտական խոնարհմամբ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | . Տեքստում գտնի անցյալ կատարյալ ժամանակաձևով դրված բայերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը, խոնարհումը:<br>. Ժամանակաձևը ճիշտ կիրառի խոսքում: |
| 39 | **Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը: Սահմանական ապառնի: Կազմությունը, խոնարհումը** | 1 | 147-148 | .Սահմանի և տարբերակի ապակատար ժամանակաձևը:<br>. Բացատրի ապակատար ժամանակաձևի կազմությունը:<br>. Ապակատար ժամանակաձևերը վերածի ապակատար անցյալի և հակառակը:<br>. Խոնարհի բայերը ապակատար ժամանակաձևով, դրական և ժխտական խոնարհմամբ:<br>. Տեքստում գտնի ապակատար ժամանակաձևով դրված բայերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը, խոնարհումը:<br>. Ժամանակաձևը ճիշտ կիրառի խոսքում: |
| 40 | **Ըղձական եղանակ, ըղձական ապառնի: Կազմությունը, խոնարհումը** | 1 | 150-151 | .Սահմանի և տարբերակի ըղձական ապառնի ժամանակաձևը:<br>. Բացատրի ըղձական ապառնի ժամանակաձևի կազմությունը:<br>. Խոնարհի բայերը ըղձական ապառնի ժամանակաձևով, դրական և ժխտական խոնարհմամբ:<br>. Տարբեր ոճի տեքստերում գտնի ըղձական ապառնի ժամանակաձևով դրված բայերը, որոշի դեմքը, թիվը, լծորդությունը:<br>. Կազմի ըղձական ապառնիի ձևեր, ճիշտ կիրառի խոսքում: |
| 41 | **Ըղձական եղանակ:Ըղձական անցյալ: Ըղձական եղանակի բայաձևերի ուղղագրությունը** | 1 | 151-152 | .Սահմանի և տարբերակի ըղձական անցյալ ժամանակաձևը:<br>. Բացատրի ըղձական անցյալ ժամանակաձևի կազմությունը:<br>. Ըղձական անցյալ ժամանակաձևերը վերածի ըղձական ապառնիի և հակառակը:<br>. Խոնարհի բայերը ըղձական անցյալ ժամանակաձևով, դրական և ժխտական խոնարհմամբ:<br>. Տեքստում գտնի ըղձական անցյալ ժամանակաձևով դրված բայերը, որոշի դեմքը, թիվը, լծորդությունը:<br>. Կազմի ըղձական անցյալի ձևեր, ճիշտ կիրառի խոսքում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 42 | **Ենթադրական եղանակ:<br>Ենթադրական ապառնի:<br>Կազմությունը, խոնարհումը** | 1 | 152-153 | .Սահմանի և տարբերակի ենթադրական ապառնի ժամանակաձևը:<br>. Բացատրի ենթադրական ապառնի ժամանակաձևի կազմությունը:<br>. Խոնարհի բայերը ենթադրական ապառնի ժամանակաձևով, դրական և ժխտական խոնարհումմբ:<br>. Տարբեր ոճի տեքստերում գտնի ենթադրական ապառնի ժամանակաձևով դրված բայերը որոշի դեմքը, թիվը, լծորդությունը:<br>. Կազմի ենթադրական ապառնիի ձևեր, ճիշտ կիրառի խոսքում: |
| 43 | **Ենթադրական եղանակ:<br>Ենթադրական անցյալ:<br>Կազմությունը, խոնարհումը** | 1 | 153-154 | .Սահմանի և տարբերակի ենթադրական անցյալ ժամանակաձևը:<br>. Բացատրի ենթադրական անցյալ ժամանակաձևի կազմությունը:<br>. Ենթադրական անցյալ ժամանակաձևերը վերածի ենթադրական ապառնիի և հակառակը<br>. Խոնարհի բայերը ենթադրական անցյալ ժամանակաձևով, դրական և ժխտական խոնարհումմբ:<br>. Տեքստում գտնի ենթադրական անցյալ ժամանակաձևով դրված բայերը, որոշի դեմքը, թիվը, լծորդությունը:<br>. Կազմի ենթադրական անցյալի ձևեր, ճիշտ կիրառի խոսքում: |
| 44 | **Հարկադրական եղանակ:<br>Հարկադրական ապառնի:<br>Կազմությունը, խոնարհումը** | 1 | 154-155 | .Սահմանի և տարբերակի հարկադրական ապառնի ժամանակաձևը:<br>. Բացատրի հարկադրական ապառնի ժամանակաձևի կազմությունը:<br>. Խոնարհի բայերը հարկադրական ապառնի ժամանակաձևով, դրական և ժխտական խոնարհումմբ:<br>. Տեքստում գտնի հարկադրական ապառնի ժամանակաձևով դրված բայերը, որոշի դեմքը, թիվը, լծորդությունը:<br>. Կազմի հարկադրական ապառնիի ձևեր, ճիշտ կիրառի խոսքում: |
| 45 | **Հարկադրական եղանակ:<br>Հարկադրական անցյալ:<br>Կազմությունը, խոնարհումը** | 1 | 155-156 | .Սահմանի և տարբերակի հարկադրական անցյալ ժամանակաձևը:<br>. Բացատրի հարկադրական անցյալ ժամանակաձևի կազմությունը:<br>. Հարկադրական անցյալ ժամանակաձևերը վերածի հարկադրական ապառնիի և հակառակը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | . Խոնարհի բայերը հարկադրական անցյալ ժամանակաձևով, դրական և ժխտական խոնարհմամբ:<br>. Տեքստում գտնի հարկադրական անցյալ ժամանակաձևով դրված բայերը, որոշի դեմքը, թիվը, լծորդությունը:<br>. Կազմի հարկադրական անցյալի ձևեր, ճիշտ կիրառի խոսքում: |
| **46** | **Հրամայական եղանակ: Կազմությունը, խոնարհումը** | 1 | 156-158 | .Սահմանի և տարբերակի հրամայական եղանակը:<br>. Բացատրի հրամայական եղանակի կազմությունը:<br>. Բացատրի հրամայական եղանակի բայաձևերի կետադրությունը:<br>. Խոնարհի բայերը հրամայական եղանակով, դրական և ժխտական խոնարհմամբ:<br>. Տեքստում գտնի հրամայական եղանակով դրված բայերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը, լծորդությունը, ցույց տա վերջավորությունը:<br>. Կազմի հրամայական եղանակի բայաձևեր, ճիշտ կիրառի խոսքում և կետադրի: |
| 47 | **Անցած նյութի կրկնություն: Ամրապնդող վարժություններ** | 1 | 158-161 | . Կկատարի տարաբնույթ գործնական աշխատանքներ՝ գրավոր և բանավոր, կամրապնդի ստացած գիտելիքները, կիմտանա դրանց կիրառման մեջ: |
| 48 | **Թեմատիկ գրավոր աշխատանք** | 1 | | |
| 49 | **Անկանոն բայեր** | 1 | 162 | . Սահմանի և տարբերակի անկանոն բայերը:<br>. Դասակարգի պարզ ևածանցավոր անկանոն բայերը:<br>. Ընկալի և բացատրի՝ ինչ է տարարմատությունը:<br>. Բացատրի՝ որ դեպքերում է անկանոնություն դրսևորվում:<br>. Խոնարհի անկանոն բայերը դրական և ժխտական խոնարհմամբ, կիրառի նախադասության մեջ:<br>. Տեքստում գտնի անկանոն բայերը, բացատրի՝ անկանոնություն դրսևորե՞լ են, թե՞ ոչ, վերլուծի ձևաբանորեն:<br>. Ճիշտ կիրառի անկանոն բայերի ձևափոխությունները խոսքում: |
| 50 | **Պակասավոր բայեր** | 1 | 163-164 | . Սահմանի և տարբերակի պակասավոր բայերը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | . Իմանա՝ բայի որ ձևերն են պակաս, ինչպես են լրացվում:<br>. Խոնարհի պակասավոր  բայերը դրական և ժխտական  խոնարհմամբ, կիրառի նախադասության մեջ:<br>. Տեքստում գտնի պակասավոր բայերը, վերլուծի ձևաբանորեն:<br>. Ճիշտ կիրառի պակասավոր բայերի ձևափոխությունները խոսքում: | |
| **51** | **Կապակցված խոսք:**<br>**Ոճագիտություն** | | 102-110 | **Նպատակ**<br>**.**Ամրապնդել տարաբնույթ տեքստեր կազմելու հմտություններ:<br>.Նպաստել տարբեր ոճերի տեքստեր կազմելու կարևորության արժևորմանը:<br>. Զարգացնել գեղարվեստական պատումի ընկալման և գեղարվեստական ոճով պատմողական խոսք կազմելու հմտություններ:<br>. Ծանոթացնել պաշտոնական ոճին:<br>.Սովորեցնել գրել և հասկանալ գովազդի ու հայտարարության գրության տարբերությունները: | **Վերջնարդյունքներ**<br>.Գեղարվեստական ոճով բանավոր և գրավոր նկարագրի որևէ առարկա կամ իրադարձություն:<br>.Գրի գովազդային տեքստ որևէ միջոցառման վերաբերյալ:<br>.Կազմի գովազդային վահանակներ՝ կիրառելով նաև ոչ խոսքային միջոցներ՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառություն, նկարներ, գծագրեր: |
| **52** | **Խոսքի ոճերը:**<br>**Գեղարվեստական ոճ** | | 167-168 | .Թվարկի խոսքի ոճերը:<br>.Բնութագրի գեղարվեստական ոճը, նշի կարևոր հատկանիշները /խոսքի հուզականություն, պատկերավորություն և արտահայտչականություն, գրողի անհատականություն/:<br>.Ներկայացնի գեղարվեստական տեքստի արձակ և չափածո օրինակներ:<br>. Տեքստից դուրս գրի պատկերավորման միջոցներ / մակդիր, համեմատություն, փոխաբերություն/:<br>.Տրված տեքստերից առանձնացնի գեղարվեստական տեքստը:<br>.Կազմի գեղարվեստական տեքստ: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 53 | Պաշտոնական ոճ | | 168-169 | .Բնութագրի պաշտոնական ոճը, նշի կարևոր հատկանիշները:<br>. Նշի պաշտոնական ոճի կիրառության ոլորտները:<br>.Ներկայացնի պաշտոնական ոճով գրված տեքստի օրինակներ:<br>.Տրված տեքստերից առանձնացնի պաշտոնական ոճի տեքստը:<br>.Կազմի պաշտոնական ոճի տեքստ տեքստ: |
| 54 | Տեքստ | | 169-170 | .Իմանա և բացատրի տեքստի կառուցվածքային առանձնահատկությունները:<br>. Ընտրի տեքստին համապատասխան վերնագիր:<br>.Տեքստը բաժանի պարբերությունների:<br>.Կազմի տեքստ՝ ըստ նախօրոք տրված պլանի կամ առանց դրա: |
| 55 | Տեղեկատվական տեքստ: Հայտարարություն, գովազդ | | 170-172 | .Իմանա՝ ինչ է տեղեկատվական տեքստը, բնութագրի:<br>. Տարբեր աղբյուրներից ներկայացնի տեղեկատվական տեքստի օրինակներ:<br>.Գրի գովազդային տեքստ որևէ միջոցառման վերաբերյալ:<br>.Կազմի գովազդային վահանակներ՝ կիրառելով նաև ոչ խոսքային միջոցներ՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառություն, նկարներ, գծագրեր: |
| 56 | Բառի ձևաբանական վերլուծություն | | 174 | .Կկատարի ձևաբանական վերլուծություն, կամրապնդի գիտելիքները ուսումնասիրած խոսքի մասերի ձևաբանական հատկանիշների վերաբերյալ: |
| 57 | Անցած թեմաների կրկնություն | | | . Կամփոփի տարվա ընթացքում ուսումնասիրած թեմաները: |